Կարգապահական գործ թիվ ԿԳ-17010

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի ապրիլի 04-ի թիվ 53-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/36-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սաթենիկ Մանուկյանին (արտոնագիր թիվ 145) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 14.03.2017թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Սաթենիկ Մանուկյանն ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից 2017թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

14.03.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 54-Ա/ԿԳ-17010 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի

կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

17.03.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Տարոն Սիմոնյանին (նիստը նախագահող):

17.03.2017թ. գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 04.04.2017թ-ին, ժամը 19:30-ին:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պալատում առկա փաստաբանների ցուցակում և փաստաբանի անձնական գործում փաստաբան Սաթենիկ Մանուկյանի որևէ հեռախոսահամար և/կամ էլեկտրոնային փոստի հասցե առկա չէ: Փաստաբան Սաթենիկ Մանուկյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր «ք. Երևան, Գայի պող. 1, բն. 111» հասցեով, սակայն փոստային ծրարը հետ է վերադարձվել՝ «Տեղափոխված» նշումով:Պալատի աշխատակազմը փաստաբան Սաթենիկ Մանուկյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 29.03.2017թ. թիվ 55 (6576) համարում հրապարակելու միջոցով:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Սաթենիկ Մանուկյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 21.05.2001թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.04.2017թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Սաթենիկ Մանուկյանը ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից 2017թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 14.03.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Սաթենիկ Մանուկյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 04.04.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.04.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Սաթենիկ Մանուկյանի (արտոնագիր 145, ստացված՝ 21.05.2001թ.) նկատմամբ 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում 18 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից չորսը Պալատի

Խորհրդի 27.08.2007թ. թիվ 13/4, 29.08.2008թ թիվ 14/5, 13.11.2009թ.թիվ 28/6 և 09.08.2011թ. թիվ 16/3 որոշումներով կարճվել է (կիրառվել է արտոնություն): Սաթենիկ Մանուկյանը 19.05.2011թ թիվ 10/3 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության, իսկ 02.04.2012թ. թիվ 1/12003ԿԳ, 29.10.2012թ. թիվ 18/ԿԳ , 21.05.2013թ. թիվ 22ԿԳ/1, 16.10.2013թ. թիվ 33ԿԳ/1, 14.02.2014թ թիվ 10ԿԳ/1, 24.10.2014թ. թիվ 174/1, 25.03.2015թ. թիվ ԿԳ/43-Ա և 25.03.2015թ. ԿԳ/44-Ա որոշումներով՝ խիստ նկատողության ձևով: 28.09.2015թ-ին թիվ ԿԳ/122-Ա, 06.10.2015թ թիվ ԿԳ/141-Ա, 03.03.2016թ թիվ ԿԳ/48-Ա, 12.12.2016թ թիվ ԿԳ/193-Ա որոշումներով անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Սաթենիկ Մանուկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամի չափով, 15.000 ՀՀ դրամի չափով, 20.000 ՀՀ դրամի չափով: 11.12.2015թ. թիվ ԿԳ/197-Ա որոշմամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար Սաթենիկ Մանուկյանն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության ձևով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սաթենիկ Մանուկյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Սաթենիկ Մանուկյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Սաթենիկ Մանուկյանին (արտոնագիր թիվ 145) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:***

2. ***Փաստաբան Սաթենիկ Մանուկյանի (արտոնագիր թիվ 145) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 25.000 ՀՀ դրամի չափով:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սաթենիկ Մանուկյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյան